

ՀՏՏ 371.31.809.198.1

Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա

**ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ
Աղջա ԶԱՐԱՐՅԱՆ**

Բանալի բառեր՝ աշակերտ, ճանաչողություն, ինքնադասադիարակություն, ինքնավորություններ, ինքնածանաչում, մանկավարժական, զիտելիքներ, ուսուցիչ, համոզմունքներ, ընթերցանություն, պատմվածք, զգայունակություն, աշխարհ, բնափորություն, որոնողական, ծայնարկիչ, սոլեղծագործական, հմնություններ:

Ключевые слова - ученик, ознание, самовоспитание, амопознание, педагогический, знание, педагог, убеждение, чтение, рассказ, чувствительность, мир, характер, поисковой, магнитофон, творческий, навыки.

Key words - pupil, cognition, self-education, opportunity, self-knowledge, pedagogical Sience, knowledge, teacher, conviction, reading, story, sensitivity, world, character, creative, skills.

A.Закарян

Развитие критического мышления на уроках самостоятельного чтения

Использование в учебном процессе методов развития критического мышления и навыков помогает учащимся младшей ступени обучения приобрести умение критически мыслить, с готовностью участвовать в решении сложных задач и делать выводы на самом высоком уровне, а также принимать активное участие в учебном процессе и сотрудничать со своими товарищами. В итоге учащиеся приобретают качества мыслящей, творческой и способной к активному обучению личности.

A.Zaqaryan

The Development of Critical Thinking in Independent Reading Classes

Using the methods of developing critical thinking and skills during the educational process, students of primary education are capable to acquire skills of critical celebrating, participate in solving difficult tasks and make conclusions on the highest level, as well as actively participate in the educational process and cooperate with partners. As a result, students acquire the qualities of thinking, creative and capable of active learning personality.

Դասավանդման ընթացքում կիրառենք քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ կարծում ենք, որ մեր փոքրահասակ սաներն ել կարող են սովորել քննադատաբար մտածել, պատրաստակամորեն մասնակցել բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ լինել դրսորենու որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ, լինելու իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցելու իրենց դասընկերների հետ։ Աշակերտները դաշտում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ։

Մոտ 2,5 հազարամյակ առաջ չինացի մտածող և փիլիսոփա Լոնֆուզիուսը, երբ նրան հարցրել են, թե ինչ է անհրաժեշտ պետության ծաղկման համար, պատասխաննել է՝

1. շատ հաց
2. ուժեղ բանակ
3. ուղեղի համապատասխան վիճակ։

Վերջինս անկասկած, անմիջականորեն պայմանավորված է կրթության համապատասխան մակարդակով։

Մանկավարժական գործընթացում և պրակտիկայում վաղուց հայտնի է դարձել այն իրողությունը, որ ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է առնվազն երկու նախապայման՝ ուսուցչի կարողություններն ու շահագրգռվածությունը և աշակերտի կարողություններն ու ձգուումը։

Դասվարի աշխատանքի դժվարությունն այն է, որ հաճախ ճիշտ չի գտնում դեպի յուրաքանչյուր աշակերտ տանող ճանապարհը և չի ստեղծում պայմաններ նրանց ունակությունների զարգացման համար։ Ամենակարևորն այն է, որ ուսուցիչը օգնի աշակերտին զիտակցելու իր անհատականությունը, նրա մեջ արթնացնի պահանջ՝ ճանաչելու իրեն, կյանքը, աշխարհը։

Յուրաքանչյուր աշակերտի հնարավորությունների հանդեպ ուսուցչի ունեցած հավատից, նրա հետևողականությունից, համբերությունից, ժամանակին օգնության հասնելու կարողությունից են կախված աշակերտի հաջողությունները ճանաչողության դժվարին ճանապարհին։

Ինքնադաստիարակությունը սկսվում է ինքնաճանաչումից: Ուսուցման և դաստիարակության արվեստուն ու վարպետությունը այն է, որ բացահայտելով յուրաքանչյուր երեխայի ուժերն ու հնարավորությունները՝ հաջողության բնորդանք պարզենք նրան մտավոր աշխատանքում: Այդ բնորդանքը, պատկերավոր ասած, դեպի մանկան սրտի այն անկյունը տանող արահետն է, որտեղ բորբոքվում է ազնիվ լինելու գանկության հուրը:

Պահպաննենք այդ արահետը և այդ հուրը: Եթե աշակերտը դասի ընթացքում թենկուզն մի փոքրիկ քայլ չի արել գիտելիքների տիրապետման ճանապարհին, դա նրա համար կորած դաս է: Անարդյունավետ աշխատանք. ահա այն վտանգը, որ դարանակալում է և՛ ուսուցչին, և՛ աշակերտին:

Կրտսեր դպրոցական տարիքը հատկապես այն շրջանն է, երբ երեխան անվերապահորեն հավատում է այն ամենին, ինչ ասում են մեծերը, կամ ինչ զրված է զրում: Երեխայի բարոյական պատկերացումները, որոնք նա ստանում է ընտանիքում, մանկավարժական զործունեության միջոցով դառնում են համոզմունքներ: Այսինքն՝ ձևավորվում է մարդու բարոյական համոզմունքների հիմքը¹:

Դաս էր Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի 2-րդ դասարանում: Դասվարը ինքնուրույն ընթերցանության համար որպես նյութ վերցրել էր Լ. Սարգսյանի «Մանուշակի հերթաբար» պատմվածքը: Մինչև բնագրի ընթերցմանն անցնելը դասվարը պարզաբանեց ընթերցանության նպատակը: Ընթերցումը սկսեց ընթերցավարժ Պերճուիհին:

- Սարալանջին բացվել, ծփում էին բազմերանգ ծաղիկները՝ մեկը մեկից նուրբ ու քնքուշ, մեկը մեկից գեղեցիկ: Արեգակի շողերը անձրևի ոսկե շիթերի նման իջել նրանց թևերին, զուրգուրում էին, որ զույներն ավելի հմայիչ ու շողշողուն դառնան: Հսկա կաղնիների, հաճարենիների, թխկիների ու լորեների ճյուղերին թռչկոտում, ուրախ համերգում էին ճնճղուկներն ու մոշահավերը, կաշաղակներն ու կերնեխները: Անտարի փեշերին՝ ոչխարի հոսի շորջը, վազվում էին Արտակն ու Արթուրը: Ոչխարների ծնի ժամանակն էր. նրանք հովիկ Նշան քնուու խնդրանքով եկել էին այստեղ, որ նորածին զառնուկներին մայր ոչխարի հետ անմիջապես զյուղ տանեն, որ հանկարծ անձրևի տակ չընկնեն ու մրսեն, հիվանդանան: Տղաները ծաղիկներով հիացած քաղուս-փայտ էին կապում, որ սուճ տանեն: Նրանք քայլում էին ոչխարի հոտի հետուից, երբ հանկարծ մասմանություն թվի վրայից լսվեց մոշահավի կչկշոցը:

- Էս ի՞նչ է խոսում, - ավագ եղբորը՝ Արթուրին, դարձավ Արտակը:
- Ի՞նչ ափսի խոսի, - զարմացավ Արթուրը, - թռչուն է, էլի, իր համար կչկշում է...

Իրականում մոշահավը զրուցում էր մասմանություն արմատների մոտ, խոտերի մեջ թաքնված կապուտաչ մանուշակի հետ:

- Ինչո՞ւ ես գլուխադ խոտերի մեջ լսցել, - նրան դիմեց մոշահավը:
- Չե՞ս տեսնում այն տղաներին, - գլուխը փոքր յինչ բարձրացրեց մանուշակը:
- Իհարկել տեսնում եմ, - մանուշակին շհասկացավ մոշահավը:
- Իսկ ինչո՞վ են զբաղված...
- Ոչխարի հոտն են հսկում, - ասաց մոշահավը, - ծաղիկներ են քաղում: Կետո՞վ ինչ...
- Ոնց թե «հետո ինչ», - նեղացավ մանուշակը, ախր եղեն շշաքնվեմ, ինձ էլ կպոկն իմ թվից ու կլսանեն իրենց ծաղիկներին:

Մոշահավը նայեց Արթուրին ու Արտակին, որոնց ձեռքին մեծ ծաղկեփնջեր կային: Նրանք այլևս ծաղիկ քաշելու միտք չունեին, մի-մի նորածին զառնուկ զրկած՝ քայլում էին զյուղ տանող ճամփով:

- Իսկ ինչո՞ւ չես ուզում քեզ քաղեն, - խոսքը առաջ տարավ մոշահավը:
- Ախր, որ քաղեն, կթոշնեմ, - խեղճ՝ խեղճ կապույտ աշքերը մոշահավին հառեց մանուշակը:
- Մոշահավը քնքանքով նայեց գեղեցիկ մանուշակին և ասաց.
- Քայց չե՞ս մինչեւ թռչնելը դու ուրախություն կապատճառեն այդ փոքրիկ տղաներին, նրանց մորքը բուրմունքով կլցնեն նրանց տունը: Իսկ թռչնելը մեկ է ափսի թռչնեն, այսօր լինի, թե վաղը, քո թվի վրա, թե...²

¹ Կարինե Թորոսյան և այլք, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2011, էջ 13:

² Լ. Սարգսյան, Մայրենի 2, հանրակրթական դպրոցի դասագիրը, Երևան, 2002, էջ 228:

Ընթերցանությունն ավարտվել էր. դասարանում խորհրդավոր լուսավոր լուսավոր էր տիրում, երբ ուսուցիչը առաջարկեց հետևյալ հարցը.

- Իսկ դուք ի՞նչ եք կարծում, ճի՞շտ էր ասում մոշահավը:
- Այսալ էր ասում մոշահավը, - տեղից ասաց Արմենը, - որովհետև յուրաքանչյուր արարած ապրել է ուզում:

- Ձեզ դու՞ք նկան մոշահավի վերջին խոսքերը, որոնք նա ասաց մանուշակին: Այդ խոսքերից մանուշակը ինչպես կզգա իրեն:

Խոսնց Անահիտը.

- Հերիաթներից լսել եմ, որ պետք է լավություն անել ուրիշներին, որ սիրտդ ուրախ լինի, հետևապնա, նթե նա մանուշակի տեղը լինենի, զլուկա չէի թարգնի խոտերի մեջ, այլ մինչև թոշնելս կուզնի ուրախություն պատճառն շատերին:

- Իսկ ի՞նչ կասեին Արթուրն ու Արտակը, եթե հասկանային մոշահավի լեզուն:

- Կասեին՝ թող մանուշակը ապրի իր մոր գրկում և իր գեղեցկությամբ ու բուրմունքով ուրախություն պարզեց անցնողներին:

- Իսկ նա կարծում եմ, - տեղից խոսնց Գագիկը, - տղաները սխալ են վարվել, որ այդքան ծաղկեներ են հավաքել: Մի՞թե նրանք չգիտեն, որ շատ ծաղկեներ գտնվում են վերացման եզրին և բազմանում են սերմերով, հետևապնա, նա ցավում եմ, որ այդ ծաղկեները գրկվել են սերմեր տալու հնարավորությունից:

- Թող մանուշակները պոկելու իրավունք ունենան նրանք, ովքեր խնամք են տանում նրանց նկատմամբ, - խրոխտ ձայնով ասաց Գոռը:

- Երեխանե՞ր, ի՞նչ անսովոր բան նկատեցիք պատմվածքի մեջ:

- Զարմանալին այն է, - ասաց Վարդուիին, - որ պատմվածքում մամլսենին, մոշահավը և մանուշակը իրար հետ մարդկային լեզվով էին խոսում: Դասվարը ավելացրենց, որ հեղինակը իր ասելիքը ավելի ազդեցիկ ու հետաքրքիր դարձնելու համար օգտագործել է «անձնավորում» պատկերավորման միջոցը:

Ուսուցչի հաջորդ հարցը անակնկալի բներց աշակերտներին.

- Կարո՞՞ղ եք այլ ավարտ հորինել:

Կա մի այսպիսի մարդկային հատկություն՝ բնավորության նրբություն, հուզականություն. դա արտահայտվում է այն բանում, որ շրջապատող աշխարհը բարձրացնում է զգայունակությունը: Նույր, հուզական բնավորության տեր մարդը չի կարող մոռանալ մի այլ մարդու վիշտը, տառապանքը, դժբախտությունը, խիդը ստիպում է նրան օգնության գալ: Բնավորության այդ բոլոր գծերը մարդու մեջ հատկանիշն ձևավորվում են ուսուցման տարրական օդակում¹:

Դասվարի նման հարցադրումները երեխաներին մղում են որոնողական աշխատանքների, որը ծնում է դժբախտությունները հաղթահարելու եռանդ, սովորելու ցանկություն, արժեհամակարգային որակների ձևավորում և երեխաների գործնական գիտելիքների բացահայտում: Այստեղ է, որ իմաստավորվում է Յան Ամոս Լուսենակու ասածը. «Իմանալ, խոսել և գործել»:

Թվում էր, թե ընթերցանությունը դրանով ավարտվեց, սակայն փորձառու դասվարը երեխաների համար ընթերցեց Ղ.Աղայանի, Հ.Թումանյանի, Պ.Սևակի և Հ.Շիրազի՝ մանուշակի մասին գրած բանաստեղծությունները: Դրանից հետո նա հանձնարարենց, որ երեխաները իրենց «Հրաշք տնտրում» բնագրից առանձնացնեն ծառերի և թռչունների անունները, կողքին նկարեն կամ փակցնեն դրանց նկարները:

Երեխաները լուր աշխատում էին, իսկ դասվարը միացրել էր ձայնարկիչը, որտեղից մեղմորեն հնչում էր «Մանուշակ» երգի հուզաքարագրական մեջ:

Աշակերտներն ինքնամոռացության մեջ նկարում էին և ուրախություն ապրում իրենց կատարած աշխատանքով:

¹Տե՛ս Սովորմանակի Վ.Ա., Միրտս նվիրում նմ երեխաներին, Երևան, 1977, էջ 217:

Միտքը միայն մտքով է արթնանում, պետք է աշակերտին խանդավառնլ իմացությամբ: Խանդավառնլ իմացությամբ նշանակում է հասնել այն քանին, որ միտքը միախառնվի մարդկային արժանապատվության զգացման հետ:

Այնքան էլ դժվար չէ անել դա. հարկավոր են միայն սեր երեխաների նկատմամբ և ստեղծագործական, ակտիվ որոնողական գործունեության հմտություններ և փուլացանություն:

Տեղեկություններ հեղինակի մասին

Աիդա Զաքարյան - մ.գ.թ., դոցենտ, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

E-mail: zaqaryan_aida@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորնել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Լ. Հովհաննիսյանը: